ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ
ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 02.09.2020թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի

թիվ ՍՑ-ՆԳ-2020/190

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի,

Մասնակցությամբ՝

«ԱՅ ԹԻ ՊՐՈՋԵՔԹՍ» ՍՊԸ-ի տնօրեն՝ Դ. Յավրումյանի (պետական գրանցման վկայական թիվ 286.110.1082644),

ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության՝ 17.08.2020թ. թիվ 26/26-1/12215-2020 գրությամբ «ԱՅ ԹԻ ՊՐՈՋԵՔԹՍ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանի (հետայսու նաև՝ Պատվիրատու) 12.08.2020թ. թիվ 01/13.1/1062-20 գրության հիման վրա, 17.08.2020թ. թիվ 26/26-1/12215-2020 գրությամբ նախաձեռնել է

«ԱՅ ԹԻ ՊՐՈՋԵՔԹՍ» ՍՊԸ-ին (հետայսու նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. <u>«ԱՅ ԹԻ ՊՐՈՋԵՔԹՍ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

«ԱՅ ԹԻ ՊՐՈՋԵՔԹՍ» ՍՊԸ-ն ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված 19.08.2020թ. գրությամբ հայտնել է հետևյալը.

«Թիվ «ՀԱՊՀ-ԳՀԱՊՁԲ-20/20» մրցույթում անճշտությունները շտկելու վերաբերյալ ծանուցումը ստացել ենք ուշացումով «ՅՈՒՔՈՄ» ընկերության կողմից տրամադրված ինտերնետային կապի այդ ժամանակահատվածում հաճախ տեղի ունեցող խափանումների պատճառով, ուստի չենք ունեցել ժամանակ ճշգրտված տարբերակը ուղարկելու:

Ի սկզբանե անճշտությունը տեղի է ունեցել «ՀԱՊՀ-ԳՀԱՊՁԲ-20/20» մրցույթում նշված «Համակարգիչը ամբողջը մեկում» անվանումը մեր աշխատակցի կողմից որպես «Լրակազմ համակարգիչ» սխալ հասկանալու պատճառով և համապատասխանաբար առաջարկ է ներկայացվել «Լրակազմ համակարգչի» համար:

Ընդունելով ՍՊԸ-ի մեղավորությունը, բայց հաշվի առնելով ոչ դիտավորյալ սխալմունքը և կապի տեղի ունեցած տեխնիկական խնդիրները, նաև այն հանգամանքը, որ «ԱՅ ԹԻ ՊՐՈՋԵՔԹՍ» ՍՊԸ-ի կողմից կատարվածն առաջին խախտումն է, խնդրում եմ հնարավորության դեպքում չներառել ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում»:

Ընկերության տնօրենը, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2020/190 ընթացակարգի շրջանակներում 28.08.2020թ. ժամը 12:20-ին հրավիրված նիստի վերաբերյալ, մասնակցել է նիստին և ներկայացրել վերը շարադրված դիրքորոշումը:

3. <u>Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանը ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 12.08.2020թ. թիվ 01/13.1/1062-20 գրությամբ հայտնել է, որ

2020թ. հուլիսի 06-ին հայտարարված «ՀԱՊՀ-ԳՀԱՊՁԲ-20/20» ծածկագրով համակարգչային տեխնիկայի գնման ընթացակարգի շրջանակում հայտ է ներկայացրել «ԱՅ ԹԻ ՊՐՈՋԵՔԹՍ» ՍՊԸ-ն:

Պատվիրատուն նշել է, որ Մասնակցի կողմից ներկայացված փաստաթղթում (առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիր) տեղ գտած անճշտությունները շտկելու նպատակով գնահատող հանձնաժողովի կողմից տրամադրվել է մեկ աշխատանքային օր, որի ընթացքում «ԱՅ ԹԻ ՊՐՈՋԵՔԹՍ» ՍՊԸ-ի կողմից շտկված փաստաթուղթ չի ներկայացվել:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2020/190 ընթացակարգի շրջանակներում 28.08.2020թ. ժամը 12:20-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. <u>ՍՑ-ՆԳ-2020/190 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ՍՑ-ՆԳ-2020/190 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանի կողմից իր կարիքների համար համակարգչային տեխնիկայի ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՀԱՊՀ-ԳՀԱՊՁԲ-20/20» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (հետայսու նաև՝ Ընթացակարգ), որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «ԱՅ ԹԻ ՊՐՈՋԵՔԹՍ» ՍՊԸ-ն:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 15.07.2020թ. նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ «ԱՅ ԹԻ ՊՐՈՋԵՔԹՍ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտի Հավելված 1.1-ը լրացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, բացակայում է ապրանքի անվանումը, ինչպես նաև չափաբաժինների համարները սխալ են լրացված:

3. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը նույն արձանագրությամբ որոշում է կայացրել նիստը մեկ աշխատանքային օրով կասեցնելու վերաբերյալ՝ մասնակցին առաջարկելով ծանուցումը ստանալուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը:

4. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարը Armeps էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով 27.07.2020թ. ծանուցել է Ընկերությանն արձանագրված անհամապատասխանությունները շտկելու վերաբերյալ:

5. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 29.07.2020թ. նիստի թիվ 4 արձանագրության համաձայն՝ «ԱՅ ԹԻ ՊՐՈՋԵՔԹՍ» ՍՊԸ-ի կողմից սահմանված ժամկետում արձանագրված անհամապատասխանությունները չեն շտկվել:

6. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 05.08.2020թ. նիստի թիվ 5 արձանագրության համաձայն՝ «ԱՅ ԹԻ ՊՐՈՋԵՔԹՍ» ՍՊԸ-ի հայտը գնահատվել է անբավարար և մերժվել:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 17.08.2020թ. թիվ 26/26-1/12215-2020 գրությունը, Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանի 12.08.2020թ. թիվ 01/13.1/1062-20 գրությունը՝ կից փաստաթղթերով, ինչպես նաև «ԱՅ ԹԻ ՊՐՈՋԵՔԹՍ» ՍՊԸ-ի դիրքորոշումը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ***հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:***

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 32-րդ կետի 1-ին ենթակետի զ) պարբերության համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը հայտով ներկայացնում է ապրանքների գնման դեպքում իր կողմից առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագրերը, իսկ հրավերով նախատեսված դեպքերում նաև առաջարկվող ապրանքի ապրանքային նշանը, ֆիրմային անվանումը, մակնիշը և արտադրողի անվանումը (այսուհետ՝ ապրանքի ամբողջական նկարագիր):

Նույն կետի 19-րդ ենթակետի համաձայն՝ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու մասին հավաստումը որակվում է որպես իրականությանը չհամապատասխանող, կամ մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը կամ ընտրված մասնակիցը չի ներկայացնում որակավորման ապահովումը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

Այսպես, Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանի կարիքների համար համակարգչային տեխնիկայի ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՀԱՊՀ-

ԳՀԱՊՁԲ-20/20» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «ԱՅ ԹԻ ՊՐՈՋԵՔԹՍ» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 15.07.2020թ. նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ «ԱՅ ԹԻ ՊՐՈՋԵՔԹՍ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտի Հավելված 1.1-ը լրացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, բացակայում է ապրանքի անվանումը, ինչպես նաև չափաբաժինների համարները սխալ են լրացված:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը նույն արձանագրությամբ որոշում է կայացրել նիստը մեկ աշխատանքային օրով կասեցնելու վերաբերյալ՝ մասնակցին առաջարկելով ծանուցումը ստանալուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը:

Արձանագրված անհամապատասխանությունները շտկելու վերաբերյալ ծանուցումը գնահատող հանձնաժողովի քարտուղարը Armeps էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով 27.07.2020թ. ուղարկել է Ընկերության:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 29.07.2020թ. նիստի թիվ 4 արձանագրության համաձայն՝ «ԱՅ ԹԻ ՊՐՈՋԵՔԹՍ» ՍՊԸ-ի կողմից սահմանված ժամկետում արձանագրված անհամապատասխանությունները չեն շտկվել:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 05.08.2020թ. նիստի թիվ 5 արձանագրության համաձայն՝ «ԱՅ ԹԻ ՊՐՈՋԵՔԹՍ» ՍՊԸ-ի հայտը գնահատվել է անբավարար և մերժվել:

Կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետով սահմանվում է, որ ***հայտերի բացման և գնահատման նիստում ապրանքների գնման դեպքում հանձնաժողովը գնահատում է նաև ներկայացված ապրանքի ամբողջական նկարագրերի համապատասխանությունը հրավերի պահանջներին:***

Կարգի 41-րդ կետով սահմանվում է, որ ***եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:***

Ընդ որում՝ Կարգի 42-րդ կետի համաձայն՝ եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: ***Հակառակ դեպքում փվյալ*** մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է:

Այսպիսով՝ արձանագրում եմ, որ Ընկերությունը, Կարգի 41-րդ կետի համաձայն, ծանուցվել է անհամապատասխանությունները շտկելու վերաբերյալ, սակայն սահմանված ժամկետում դրանք չի շտկել, այսինքն՝ «ԱՅ ԹԻ ՊՐՈՋԵՔԹՍ» ՍՊԸ-ն «ՀԱՊՀ-ԳՀԱՊՁԲ-20/20» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում թույլ է տվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի խախտում, ուստի առկա են Ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքերը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության՝ 17.08.2020թ. թիվ 26/26-1/12215-2020 գրությամբ «ԱՅ ԹԻ ՊՐՈՋԵՔԹՍ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը բավարարել և «ԱՅ ԹԻ ՊՐՈՋԵՔԹՍ» ՍՊԸ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված երկու տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**